



«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախաձեռնությամբ 2019 թվականի մարտի 11-ին Հանրային բնապահպանական դատարանը քննեց «Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման հետևանքները» գործը՝ ըստ «Հայկական բնապահպանական ձևակառուցման» քաղաքացիական նախաձեռնության անդամ Աննա Շահնազարյանի դիմումի:

Գործով դատավորներն էին՝ էկոլոգ-իրավաբան Նազելի Վարդանյանը, հրապարակախոս, ազգագրագետ Հրանուշ Խառատյանը, իրավապաշտպան Զարուհի Հովհաննիսյանը, Լոռու մարզի «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Օլեգ Դուլգարյանը, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը:

Հանրային դատավարության ժամանակ քննվեց ՀՀ նախկին կառավարության և պետական լիազոր մարմինների մասնակցությունը և պատասխանատվությունը Թեղուտի ծրագրի հետևանքով ստեղծված իրավիճակի համար, «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Վալլեքս» խմբի կողմից ՀՀ օրենսդրական պահանջների չպահպանումը, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, առողջապահական, բնապահպանական ռիսկերի չգնահատման արդյունքում ստեղծված իրավիճակը:

Որպես տուժողներ հանդես եկան Շնող համայնքի ավագանու անդամ Աշոտ Ադամյանը, Շնողի բնակիչներ Լևոն Ալիխանյանը, Արայիկ Բաբայանը, Թեղուտ բնակավայրի բնակիչ Ռայա Մելքոնյանը:

Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ Արտակ Դեմիրճյանը ներկայացրեց պաշտոնական դիրքորոշումը:

Որպես վկաներ հանդես եկան «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ Լենա Մանվելյանը, «Հայկական բնապահպանական ձևակառուցման» քաղաքացիական նախաձեռնության անդամներ Անի Խաչատրյանը և Լևոն Գալստյանը, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կարինե Դանիելյանը:

Իր փորձագիտական գնահատականը ներկայացրեց ԷկոԼուրի փորձագետ Ռոզա Զուլհալյանը:

Հանրային բնապահպանական դատարանը վճռեց Թեղուտի ծրագրով թույլ տված խախտումները ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն: Նյութի աղբյուր՝ <https://www.ecolur.org/hy/>



